

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«17» ապրիլի 2023 թ. թիվ 181 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. Սարգսյան



ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի որակի ապահովման մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) կանոնադրությանը, ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի կանոնակարգին, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ներքին իրավական ակտերին և սույն աշխատակարգին համապատասխան:
2. Հանձնաժողովի գործունեության նպատակն իր կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկությունների ներկայացումն է:
3. Հանձնաժողովն իր ոլորտին վերաբերող հարցերը քննարկում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի և տնօրենի հանձնարարությամբ:
4. Հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում են ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի կողմից:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են.

1) մշակել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի հաստատմանը ենթակա որակի ներքին և արտաքին ապահովման ոլորտի իրավական ակտերի նախագծերը,

2) տալ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ներքին ապահովման ոլորտին առնչվող չափորոշիչների, գործընթացների և/կամ ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ

երաշխավորություններ և առաջարկներ,

3) համագործակցել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման այլ կառույցների ու խմբերի հետ,

4) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի առաջին նիստը հրավիրում է տնօրենը, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի հաջորդ նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում հանձնաժողովի անդամների կեսը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

8. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից նշանակված հանձնաժողովի անդամը:

9. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվող օրակարգով:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

10. Հանձնաժողովի նախագահը՝

5) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

6) համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,

7) առանձին հարցերի քննարկման նպատակով հրավիրում է

համապատասխան մասնագետների և փորձագետների,

8) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,

9) իրականացնում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

11. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովում բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկումներին,

2) հանձնաժողովում անցկացված քննարկումների հիման վրա քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,

3) հանձնաժողովի որոշմամբ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,

4) իրականացնում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

12. Հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստում: